ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 521775 #427, 099400840
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

19.01.2012թ.
153-ի 2

Հայաստանի Հանրապետության Ոստիկանապետ
պարոն Վ. Գասպարյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Գասպարյան

14.12.2011թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել Երեւան քաղաքի ճանապարհների տարբեր հատվածներում տեղադրված տեսանկարահանող և արագությունը չափող սարքերի վերաբերյալ հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ գործառույթ են իրականացնելու տվյալ տեսախցիկները։
2. Հանրապետության ո՞ր հատվածներում են նախատեսված տեղադրել տվյալ տեսախցիկները։
3. Եթե արդեն տեղադրվել են, խնդրում ենք հայտնել՝ ո՞ր փողոցներում։
4. Ինչպե՞ս է արձանագրվելու տրանսպորտային միջոցի խախտումը։
5. Երբվանի՞ց է գործելու տվյալ համակարգը։
6. Ճանապարհի այն հատվածներում, որտեղ տեղադրվելու են տեսախցիկները, լինելու՞ են արդյոք զգուշացնող նշաններ։

Սակայն մինչ օրս ԻԱԿ-ը ՀՀ Ոստիկանությունից պատասխան չի ստացել։

Ուստի, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերոնշյալ տեղեկությունները։

Կանխավ շնորհակալ եմ։

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան